

* * *

Երեմիա Չէլէպիի կենսագիրները կը յիշատակեն անոր ընտանեկան պարագաները ու աւելի կամ նուազ տեղեկութիւններ կու տան անոնց մասին: Մենք կարեւոր կը դատենք նորագոյն յաւելումներ ընել այդ տեղեկութեանց վրայ՝ որքան որ կ'ընձեռեն մեր աչքի առաջ ունեցած աղբիւրները, որոնց մէջ առաջին տեղը կը զբաւէ Մինաս Ամդեցիի Օրագրութիւնը:

Երեմիայի ընտանիքին մէջ կը յիշուին Ա. Իր հայրը Մարտիրոս քահանայ Քեօմիւրեան, Բ. Իր մօր քեռին ու իր հայրագիրը Մանեսի Ամբակում, եղբայրները՝ Գ. Գեորգ (այսա Մարտիրոս քահանայ), Դ. Կոմիսսա (այսա քահանայ), Ե. քոյրը՝ Երիմեկ, որդիները՝ Զ. Ամբակում (այսա Գրիգորիս վարդապետ), Է. Մաղափա և Ը. դուստրը՝ Սողոմէ:

Սոսինք ասոնց վրայ առանձին առանձին:

Ա. ՄԱՐՏԻՐՈՍ ՔԱՀԱՆԱՅ ՔԷՕՄԻՐՃԵԱՆ. — Զ. Ն. Ակինեան ասոր մահուան մասին կը գրէ. «Պէտք է պատահած ըլլայ 1664էն ետքը և 1666էն յառաջ. վերջին թուականիս գրած Յիշատակարանի մը մէջ, զոր Ապրիլ Չէլէպիի խնդրանքով կցած է Աւետարանի մը վերջը, իւր ծնողքը արդէն մեռած գիտէ»⁽¹⁾: Մինաս Ամդեցի, սակայն, իր Օրագրութեան մէջ բացորոշ կերպով կ'արձանագրէ Տէր Մարտիրոսի մահը այսպէս. Երուսաղէմ, ՌՃԼ = 1681. «Փետրվար ԺԵ. Գչի, . . . Բերդի տղան Ըստամպօլու եկն (թուղթին ծայրը խզտուած) [եւ երբ գիր] ի Մարտիրոս վարդապետէն (Ղրիմեցի) Քոմուրճին մեռաւ տէյի» (թղ. 2ա): Ամդեցիի այս յիշատակութեան ճշգրտութիւնը բնաւ կաս-

(1) Չէլէպի, էջ 27, 28.